ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ-ԲԾ-ԷԱՃ-ԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝
գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան «14» հունվարի 2019 թ.
ժամը՝ **11 ⁰⁰**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Թովմասյան
Անդամներ՝ Ս. Անանյան
Վ. Թովմասյան
Քարտուղար՝ Հ. Վարդանյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 28-ին, կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեից սույն թվականի հունվարի 10-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

2. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

2.1. Իրականացված գնահատումների հիման վրա ՀՀ-ԲԾ-ԷԱՃ-ԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Վարդան Մկրտչյան ԱՁ-ին,

2.2. Հանձնաժողովի քարտուղարին.
Պայմանագրի կնքման նպատակով Վարդան Մկրտչյան ԱՁ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Թովմասյան
Անդամներ՝ _____ Ս. Անանյան
_____ Վ. Թովմասյան
Քարտուղար՝ _____ Հ. Վարդանյան